ԴՊՐՈՑԻ 5-ԱՄՅԱ

ԶԱՐԳԱՑՄԱՆ

ԾՐԱԳԻՐ

ՀՀ Լոռու մարզի «Միխայելովկայի միջնակարգ դպրոց » ՊՈԱԿ-ի

2023-2028 ուս. տարիների

2023Թ.

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ըստ <<Հանրակրթության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի՝ պետական քաղաքականության հենքը ազգային դպրոցն է, որի կազմակերպական հիմքը դպրոցի զարգացման ծրագիրն է, որը նպատակաուղղված է համակողմանիորեն զարգացած, հայրենասիրության, պետականության և մարդասիրության ոգով դաստիարակված, մարդասիրական կողմնորոշում ունեցող անձի ձևավորմանը:

<<2023-2028թթ. Զարգացման ծրագիրը>> (այսուհետ՝ Ծրագիր) մշակված է ըստ Հայաստանի Հանրապետության կրթության զարգացման պետական ծրագրի:

Ծրագրի հիմքում դրվել են Հայաստանի Հանրապետության Կառավարության կողմից հաստատված կրթության առանձին ոլորտների ռազմավարական ծրագրերը և զարգացման հայեցակարգերը, ինչպես նաև Միխայելովկա համայնքի առանձնահատկությունները:

Հիմք ընդունելով հիմնական արդեն իսկ արձանագրված ձեռքբերումները՝ ծրագիրը ուղղված է դրանց աստիճանական զարգացմանը՝ նախանշելով զարգացման գերակա ուղղություններն ու ռազմավարությունները:

«Կրթությունն ամենահզոր զենքն է, որը դու կարող ես օգտագործել

աշխարհը փոխելու համար»: ՆԵԼՍՈՆ ՄԱՆԴԵԼԱ

Այսօր մենք ապրում ենք բարդ և դժվարին աշխարհաքաղաքական զարգացումների, փոփոխությունների առանցքում, երբ իրադարձությունների ճշգրիտ ընկալումն ու վերլուծությունը, քայլերի ու արագ կողմնորոշվելու հմտությունները, առողջ միտքն ու սթափ դատողությունը անհրաժեշտություն են: Իրադարձությունները՝COVID-19-ի համավարակի և պատերազմի հետևանքները, ստիպում են խոստովանել, որ այսօր դպրոցի՝որպես սերունդ կերտելու և դաստիարակելու,որպես բարձր արժանապատվությամբ հայ և համամարդկային քաղաքացի կերտելու հաստատության ղեկավարման գործ ստանձնելը մեծագույն պատասխանատվություն է և բարդագույն աշխատանք:
Տեխնոլոգիական զարգացած արաշրջանը մեզ ստիպում է քայլելու ժամանակին համընթաց, մեր երեխաների մեջ զարգացնելու ապրելու, սովորելու,պայքարելու,վերլուծելու,ստեղծելու կարողունակություններ:
Ըստ ՀՀ «Կրթության մասին» օրենքի՝ կրթության բնագավառում պետական քաղաքականության կազմակերպական հիմքը կրթության զարգացման պետական ծրագիրն է:
Դպրոցի զարգացման ծրագիրը ուսումնական հաստատության

կարևորագույն ռազմավարության փաստաթուղթն է, որի հիման վրա պլանավորվում է հինգ տարվա տեսլականը՝ 2023-2028թթ։ Դպրոցը առաջնորդվում է իր զարգացման հեռանկարային ծրագրով և աշխատում է այնպես, որ հնարավորինս արդյունավետ և ժամանակին իրականացվեն նախատեսված աշխատանքներն ու միջոցառումները։
Այն մշտապես ուշադրության կենտրոնում է պահում կրթական համակարգի բարեփոխումները և հետևելով դրանց՝ իրականացնում է իր աշխատանքները։
Հանրակրթության դերն աճում է, միաժամանակ կրթությունը վերածվում է մի գործոնի, որը նպաստում է հասարակության մեջ մարդու դերի առավել արժևորմանը՝ զարգացնելով համակեցության, հանդուրժողականության, համագործակցության և արժեքային որակներ։

Համաշխարհային արդի զարգացումներն իրենց անմիջական ներգործությունն

են ունենում հանրակրթական դպրոցի վրա՝ առաջադրելով տարատեսակ խնդիրներ։
 Պետության և ազգի անվտանգության ապահովման ու հզորացման

գործում գերխնդիր է դառնում պետական մտածելակերպ ունեցող և ապագայի մարտահրավերներին դիմակայելու պատրաստ մարդու ձևավորումը։

 Գերխնդիրը կրթության կազմակերպման առավել կատարյալ ձևերի և եղանակների մշակումն ու կիրառումն է և դրանցով ուսուցման բարձրորակ ապահովելը։
 Հիմնական կրթությունը պարտադիր և հասանելի է յուրաքանչյուր անձին, անկախ նրա հետաքրքրություններից, նախնական մասնագիտական կողմնորոշումից, մտավոր և ֆիզիկական կարողություններից։
 Հանրակրթությունը պետք է իրականացվի ազգային հիմքի վրա՝ համամարդկային արժեքների ներդաշնակ զուգորդմամբ։
 Հանրակրթությունն իրականացվում է սովորողների տարիքային առանձնահատկություններին և զարգացման մակարդակին համապատասխան։
 Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց կրթությունը իրականացնելու նպատակով տարեցտարի հարստացնել դպրոցի նյութատեխնիկական բազան (ներառել սովորողների համար անհրաժեշտ տարածքներ, կառույցներ, ինչպես նաև կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց ուսուցման համար անհատական տեխնիկական միջոցներ և սարքավորումներ,

համակարգչային դասարաններ, սննդի, բժշկական սպասարկման, առողջարարական և բուժիչ-կանխարգելիչ միջոցառումների կազմակերպում, սանիտարահիգիենիկ սպասարկում):
 Ուսումնադաստիարակչական աշխատանքի հիմքում պետք է դրվի ազգային արժանապատվություն ունեցող հայ մարդու դաստիարակությունը, որը ճանաչում, ընդունում և հարգանքով է վերաբերվում իր և ուրիշ ժողովուրդներին, նրանց ստեղծած հոգևոր և մշակութային արժեքներին:
 Շատ կարևոր է հասարակության մեջ բարձրացնել ուսուցչի հեղինակությունը ամեն հնարավոր միջոցներով, քանզի ուսուցիչն ինքը էլ ավելի կարժևորի իր գործունեությունը, կբարձրացնի իր ինքնագնահատականը և ավելի պատասխանատու և ազնիվ կվերաբերվի իր գործունեությանը և գործունեության արդյունքին: Ուսուցիչն է, որ պատասխանատու է յուրաքանչյուրն որ սերնդի կրթական մակարդակի և տվյալ սերնդի մեջ սերմանած արժեքային համակարգի համար:
Պետական քաղաքականության և հասարակական գիտակցության մեջ կրթությունը գերակայությունների շարքում շարունակում է մնալ որպես ազգային արժեք և սոցիալ-տնտեսական առաջընթացի կարևոր գործոն: Կրթության բնագավառի գերխնդիրն է կրթության որակի բարձրացումը և մատչելիությունը՝ քաղաքացիներին իրենց ձգտումներին և ընդունակություններին համապատասխան կրթություն ստանալու համար: Միխայելովկայի միջնակարգ դպրոցի զարգացման ծրագիրը մշակելիս հաշվի են առնվել բոլոր առաջնահերթությունները՝ իրատեսական և իրագործելի նպատակներ սահմանելու, գործունեության ճշգրիտ ռազմավարություն մշակելու և հաստատուն քայլերով վերջնարդյունքներ արձանագրելու: Դպրոցին վերաբերվելու որպես անհատի և քաղաքացու արժեհամակարգը ձևավորող կարևորագույն վայրի, որտեղ դեռ նոր չարի ու բարու սահմանները տարանջատող երեխայից կերտվում են արդարության, հայրենասիրության, ուրիշի իրավունքի նկատմամբ հարգանք տածող, օրենքի գերակայությունը ընդունող, վերլուծող ու մեկնաբանող քաղաքացիներ: Դպրոցում աշակերտների շրջանում արժեհամակարգ ձևավորողը, սերունդներին գիտելիք և հմտություններ փոխանցողը, նպատակադրվող ծրագրերի իրականացնողը ուսուցիչն է: Կարևորելով ուսուցչի դերն ու գործունեությունը՝ որպես հանրակրթության պետական չափորոշիչների իրագործողի, մեր ապագա զինվորի, բժշկի, դատավորի, վարչապետի և պետության համար այլ կարևոր մասնագիտություններ ունեցող անձանց կերտողի, շեշտադրում ենք առանձնահատուկ կարևորությունը՝ բարձրացնելու ուսուցչի հեղինակությունն ու դերը, վարձատրությունը, կարևորել վաստակը, մշտապես խրախուսել նվիրյալ ուսուցիչներին: Այսօր ուսուցիչը պատասխանատվությամբ

ընկալում է իրեն վստահված դերը, գիտի հանրակրթության պետական չափորոշիչներով իրեն ներկայացված պահանջներն ու
պատվախնդրորեն գնում է դրանք իրագործելու: Ուստի հասարակությունը պետք է գնահատի ուսուցչի դերն ու վեհ գործը:
Մշտապես սերտ պահելով Դպրոց-համայնք-ծնող-ուսուցիչ-աշակերտ կապը՝ Միխայելովկայի միջնակարգ դպրոցը պետք է ձգտի իր արդյունավետ գործունեությամբ բարձրացնել դպրոցի և ուսուցչի դերը հասարակության մեջ, քանի որ ուսուցիչը կրթական համակարգի սիրտն է:

Համաձայն Հանրակրթության մասին ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի ազգային դպրոցը պետական քաղաքականության հենքն է,
որի գլխավոր նպատակը համակողմանիորեն զարգացած, հայրենասիրության, պետականության և մարդասիրության ոգով
դաստիարակված և մասնագիտական կողմնորոշում ունեցող անձի ձևավորումն է:

«Կրթության ամբողջ նպատակը հայելիները պատուհաններ դարձնելն է» Ս.ՀԱՐԻՍ

Միխայելովկայի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի զարգացման ծրագիրը մշակելիս առանձնահատուկ ուշադրություն է
դարձվել հանրակրթության ոլորտում ներառական կրթության իրականացման ծրագրերին և հայեցակետերին: 2020 թվականից Հայաստանի Հանրապետությունը անցում է կատարում համընդհանուր ներառականության և ծրագրված աշխատանքների իրականացման համար, անշուշտ, կպահանջվի լուրջ և նպատակային աշխատանք, պատասխանատվության զգացում և նվիրում՝վստահված գործին:
Իմ մանկավարժական գործունեության 22 տարիների հիմքում մշտապես դրված է եղել սերը՝ սեր ընտրած մասնագիտության հանդեպ, սեր զբաղեցրած աշխատանքի հանդեպ, սեր աշակերտների և դպրոցի հանդեպ: Այս տարիների ընթացքում ինձ, կարծես թե, հաջողվել է ստեղծել կրթական այնպիսի միջավայր, ուր իշխում է հանդուրժողականությունը, փոխադարձ հարգանքն ու ըմբռնումը և համագործակցությունը:

ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

1. ԴՊՐՈՑԻ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ
2. ԻՐԱՎԻՃԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ
3. ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ
4. ԴՊՐՈՑԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՆՈՆԱԿԱՐԳՈՂ ԻՐԱՎԱԿԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ, ԽՈՐՀՐԴԱԿՑԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ
5. ԴՊՐՈՑԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆԱԽԸՆՏՐԵԼԻ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
6. ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ և ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ
7. ԴՊՐՈՑԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՈՒՄԸ
8. ՀԱՅՐԵՆԱՍԻՐԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ
9. ԴՊՐՈՑԻ ՇԵՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԲԱՐԵԼԱՎՈՒՄ և ՆՅՈՒԹԱՏԵՂՆԻԿԱԿԱՆ ԲԱԶԱՅԻ ՀԱՐՍՏԱՑՈՒՄ
10. ԴԶԾ-Ի ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՌԻՍԿԵՐԸ
11. ԴԶԾ-Ի ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ
12. ԴԶԾ-Ի ՄՈՆԻԹՈՐԻՆԳ /ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄ/
13. ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

1. ԴՊՐՈՑԻ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ

Առաքելությունը կազմակերպության ցանկալի ապագայի մտապատկերն է:
«Ամենակարևոր երևույթը դպրոցում, ամենաուսուցողական առարկան, ամենակենդանի օրինակը աշակերտների համար հենց ինքը ուսուցիչն է »: Ա.ԴԻՍՏԵՐՎԵԳ

Ուսումնական հաստատության առաքելությունը ցանկալի ապագայի մտապատկերն է, որը ենթադրում է ազգային հենքի վրա որակյալ հիմնական կրթություն ապահովելը, բազմակողմանիորեն զարգացած, հայրենասիրական որակներով հարուստ, կյանքի դժվարին իրավիճակներում կողմնորոշվող և ճիշտ որոշումներ ընդունող անձի ձևավորումն է: Նպատակ ունենք իրականացնելու կրթությանն և դաստիարակության այնպիսի գործընթաց, որի արդյունքում հաջողությամբ կարող են սովորել բոլորը՝ օժտված և առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաները: Ուսուցման այս մոդելը՝ հագեցած բազմազանությամբ և տարբերակված ուցուցման սկզբունքներով, միտում ունի ապահովելու երեխաների բարոյական, հայրենասիրական, մարդասիրական դաստիարակությունը: Սովորողն այս դպրոցում ոչ միայն բազմակողմանի և հարուստ գիտելիքներ պիտի ստանա, այլև մրցունակ լինի համաշխարհային կրթական շուկայում, ծանոթ լինի նորարար և ժամանակակից տեխնոլոգիական առաջընթացին, կրողը լինի մարդկային և բարոյական արժեհամակարգի:

Վաղվա օրը ձևավորվում է այսօր. առողջ սերունդ քաղաքացիական առողջ հասարակության համար:

Այս առաքելության իրականացման ճանապարհին կարևորում ենք կրթական գործընթացում ժամանակավրեպ չլինելը: «Արագությունների», «տեղեկատվության», «ինտեգրման» անվանված քսանմեկերորդ դարը պահանջում է արմատական փոփոխություններ կրթական ոլորտում: Փոփոխությունների համակարգված իրականացման համար որպես ելակետ ենք ընդունում զարգացման սույն ծրագիրը, որը ենթադրում է աստիճանական իրականացում:

«Հանրակրթության մասին» ՀՀ օրենքը սահմանում է. «Հանրակրթությունը անհատի, հասարակության և պետության շահերից բխող, հանրակրթության պետական կրթակարգին համապատասխան անձի ուսուցման և զարգացման գործընթաց է, որը նպատակաուղղված է երեխայի, սովորողի մտավոր, նրա անձի՝ որպես ապագա քաղաքացու ձևավորմանը, ինքնուրույն կյանքին նախապատրաստմանը, մասնագիտական կողմնորոշմանը և մասնագիտական կրթության նախապատրաստմանը:

Միջնակարգ դպրոցի առաքելությունը իր սովորողներին ազգային հենքի վրա տարրական և հիմնական որակյալ կրթություն տալն է՝ ապահովելով համակողմանիորեն զարգացած, հայրենասիրության և մարդասիրության ոգով դաստիարակված քաղաքացիների ձևավորումը, որոնք կարող են իրենց կրթությունը շարունակել ավագ դպրոցներում, նախնական մասնագիտական

(արեհեստագործական), միջնակարգ–մասնագիտական և այլ ուսումնական հաստատություններում:

Միջնակարգ կրթությունը պարտադիր է: Միջնակարգ կրթության պարտադիր լինելու պահանջը պահպանվում է մինչև սովորողի 18 տարին լրանալը, որը չի տարածվում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների որոշակի կատեգորիաների վրա, որը սահմանում է ՀՀ կառավարությունը:

Մեր օրերում և՛ հասարակական գիտակցության, և՛ պետական քաղաքականության մեջ կրթությունը, հատկապես՝ որակյալ կրթությունը և դաստիարակությունը շարունակում են մնալ գերակայությունների շարքում՝ որպես ազգային արժեք և սոցիալ-տնտեսական առաջընթացի կարևոր գործոն:

Կրթության բնագավառի գերխնդիրն է կրթության որակի բարձրացումը՝ ապահովելով համակարգի արդյունավետ գործունեությունը և քաղաքացիների՝ իրենց ձգտումներին և ընդունակություններին համապատասխան կրթություն ստանալու հավասար մատչելիությունը:

Դպրոցի առաքելության կարևորագույն կողմը հայեցի կրթության և դաստիրակության ապահովումն է, քանզի պետական քաղաքականության մեջ որակյալ կրթությունը շարունակում է մնալ գերակայությունների շարքում՝որպես ազգային և սոցիալ-տնտեսական առաջընթացի կարևորագույն գործոն:

21-րդ դարի կրթության հիմնական նպատակները՝

- Կարողանալ ապրել
- Կարողանալ աշխատել
- Կարողանալ ապրել միասին
- Կարողանալ սովորել և սովորեցնել

Մեր դպրոցի սաները դպրոցն ավարտելիս հենց այս կարողունակություններով պիտի զիված լինեն:

- Պետության և ազգի անվտանգության ապահովման հզորացման գործում գերակա խնդիր է ապագայի մարտահրավերներին դիմակայելու և պայքարելու պատրաստ նունակ մարդու ձևավորումը:
- Ուսումնական, սոցիալ-հոգեբանական, ստեղծագործական այնպիսի միջավայրի ձևավորումը, որը կապահովի յուրաքանչյուր սովորողի ստեղծագործական հմտությունների, քննադատական մտածողության, անհատական ունակությունների զարգացմանը:
- Ազգային գաղափարախոսության կրող և համաշխարհային մշակութային կյանքին ինտեգրված քաղաքացի դաստիարակելը, ով ունակ կլինի դիմագրավելու ժամանակակից մարտահրավերներին և իր ավանդը ներդնելու հայկական մշակույթի զարգացման և համաշխարհային հարթակներում այն ներկայացնելու գործին:

 Տեղեկատվական բարձր տեխնոլոգիաների կիրառումը արվեստում դարձնել ամենօրյա կրթության մաս: Ակտիվացնել արվեստի և տեղեկատվական տեխնոլոգիաներում կիրառվող արվեստի տեսակների անմիջական կապը: Սովորողներին հնարավորություն տալ սեփական նախաձեռնություններն ուծրագրերը իրականացնել արդի ժամանակներին համահունչ:
 Սովորողների մասնագիտական կողմնորոշմանը աջակցող և նրանց անձի հնարավորությունների ամբողջական բացահայտմանն ուղղված կրթական միջավայրիապահովումը:
 Յուրաքանչյուր սովորողի համար այնպիսի բարոյահոգեբանական միջավայրի ստեղծումը, որտեղ սովորողը կարող է դրսևորել իր կարողություններն առավելագույնձևով:
 Մերօրյա մարտահրավերների համատեքստում առանձնակի կարևորել լեզուների ուսուցումը, որոնց տիրապետումը 21-րդ դարի ստեղծագործող անհատի համար առաջին հերթին հաղորդակցման և մասնագիտական զարգացման ապահովման երաշխիք է:
 Հենվելով արդեն առկա փորձի վրա՝ անհրաժեշտ է բարելավել միջավայրային պայմանները՝ ապահովելով կրթության
առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների կրթություն ստանալու հիմնարար իրավունքը: Ռեսուրս սենյակներից մեկը անհրաժեշտ է հագեցնելու սենսորային հարմարանքներով և այլ հարմարանքներով, որոնք կնպաստեն սովորողների առողջական,հոգեբանական խնդիրների հաղթահարմանը:
 Կարևորելով յուրաքանչյուր սովորողի անհատական կարողություններն ու ունակությունները՝ ստեղծել միջավայր, որը հաճելի և սիրելի է սովորողի համար:
 Ակտիվացնելով աշակերտական խորհրդի գործառույթները՝ զարգացնել սովորողների իրավագիտակցությունը, ապահովել ինքնակառավարմանմարմինների լիակատար և ակտիվ գործունեությունը:
 Սովորողների համար ստեղծագործական կարողությունների զարգացման տարբեր հարթակների ապահովումը դարձնել առաջնահերթություն:
 Ձևավորել ազնիվ և արդար ապրելու և գործելու արժեհամակարգ:
 Կրթության մեջ կարևորել ոչ միայն գիտելիքը, այլև ապրելու և գործելու կարողունակությունները/կոմպետենցիաները/:
 Ժողովրդավարական արժեքների խթանումն ու դաստիարակումը համարել առաջնահերթություն, սեփական օրինակներով խթանել և մոտիվացնել:
 Ազգային հենքի վրա տրվող կրթությունն ու դաստիարակությունը դնելհայրենասիրական դաստիարակության հիմքում:
 Դպրոցը իր գործունեությամբ և արժեքներով պետք է դառնա անվերջ գեղեցիկը, լավը, բարին փոխանցող օրինակելի միջավայր, որտեղ սովորողն իրեն զգա պաշտպանված, ազատ,անկաշկանդ, որտեղ յուրաքանչյուր օր աստիճանական աճ լինի աշակերտի համար:

 Ուսուցիչը պետք է լինի կրողը և փոխանցողը այս արժեհամակարգի, լինի հոգատար ոչ միայն ուսումնառության արդյունքի, այլև սովորողի հանդեպ: Նոր ժամանկների կրթությունը ենթադրում է ունենալ անվերջ սովորելու և սովորեցնելու պատրաստակամ, հոգատար, սրտացավ, հանդուրժողականությամբ և անսպառ գիտելիքներով լեցուն ուսուցիչներ:

2. ԻՐԱՎԻՃԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ ԾՐԱԳՐԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ

ՀՀ Լոռու մարզի Միխայելովկայի միջնակարգ դպրոցի զարգացման ծրագրում իրատեսական նպատակներ և խնդիրներ սահմանելու համար նախ անհրաժեշտ է վերլուծել առկա իրավիճակը, բացահայտել ուժեղ և թույլ կողմերը, վերհանել առկա հիմնախնդիրները:

Վերլուծությունը համակարգված իրականացնելու համար նպատակահարմար է այն կատարել ըստ որոշակի ոլորտների՝ առավելագույնս ընդգծելով դպրոցի ուժեղ և թույլ կողմերը, առկա խնդիրները:

Կարևորագույն խնդիրներից են անբավարար ֆինանսական միջոցներ:

ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐ	ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐ
• Դպրոցի գործունեությունը կանոնակարգող իրավական ակտերը (դպրոցի կանոնադրություն, տեղայնացված օրինակելի իրավական ակտեր, ներքին իրավական ակտեր), դրանց վարումը: • Կառավարման և խորհրդակցական մարմինները: • Աշակերտական համակազմը: • Մանկավարժական համակազմը: • Համագործակցությունը կրթության կառավարման մարմինների հետ: • Ուսումնական միջավայրը, • Կրթության որակը՝ ըստ սովորողների ուսումնառության արդյունքների:	• Դպրոցի նյութատեխնիկական բազան: • Մանկավարժական համակազմում որակավորման տարակարգ ունեցողների պակասը, • Շնորհներով օժտված երեխաների համար բացակայում է տարբեր խմբակներ(երգ, պար, օտար լեզուների ուսուցում և այլն)բացելու հնարավորությունը: • ՏՀՏ-ների ներդրման և օգտագործման մակարդակը: • Դպրոցը չունի հոգաբարձուների խորհուրդ: • Դպրոցի ուսումնանյութական բազան չի համապատասխանում ժամանակակից պահանջներին: • Չկան ժամանակակից տեխնոլոգիաներով հագեցած լաբորատորիաներ, նյութեր: • Չկան առարկայական

	կաբինետներ, ունեցած նյութատեխնիկական բազան հին է: • Դպրոցը չունի սպորտդահլիճ, հանդիսությունների դահլիճ, ջեռուցման համակարգ • Առաջին հարկի հատակը քանդված է, միջանցքի պատուհանները հին են • Դպրոցում բնագիտական առարկաների ուսուցման հետ կապված գործնական պարապմունքների իրականացման համար լաբորատոր սարքավորումների, փորձանոթների, քիմիական նյութերի և ընդհանրապես կաբինետային սիստեմի բացակայությունը չի նպաստում ֆիզիկայի, քիմիայի, կենսաբանության ուսուցման որակի բարելավմանը: • Գրադարանն անբարեկարգ վիճակում է: Պատշաճ կահավորված չէ: Գեղարվեստական և մասնագիտական գրքերով համալրման կարիք ունի: • Դպրոցամերձ հողամասն ունի բարեկարգման, կանաչապատման և ցանկապատման կարիք:

3. ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

Իրավիճակի վերլուծության և հիմնախնդիրների բացահայտման հիման վրա սահմանվել են զարգացման ծրագրի նպատակներն ու համապատասխան խնդիրները: Դպրոցի զարգացման ծրագիրը կոչված է ապահովելու դպրոցի բարեփոխումների նպատակով առանձնացված հետևյալ խնդիրների լուծումը՝

- ուսման որակի և արդյունավետության բարձրացում, առաջադիմության վարկանիշավորման ցուցանիշի բարելավում,
- դպրոցի տեխնիկական ռեսուրսների, նյութատեխնիկական բազայի , ուսումնամեթոդական բազայի հարստացում,
- բոլոր առարկաների դասավանդման ընթացքում ՏՀՏ-ի կիրառում, դպրոցի գործունեությունը կարգավորող նորմատիվային փաստաթղթերի էլեկտրոնային փաթեթի ստեղծում,
- մանկավարժական համակազմի մասնագիտական որակի բարձրացում, վերապատրաստումների ու կամավոր ատեստավորման մասնակցության նպաստում, մոտիվացնել տարակարգ ստանալ ցանկացող ուսուցիչներին արտաբյուջետային միջոցների հոսքեր ապահովելու նպատակով համապատասխան քայլերի ձեռնարկում /վարձակալություն, խմբակներ, ձեռնարկատիրական գործունեություն/
- սովորողների մասնագիտական կողմնորոշմանն ուղղված նախադրյալների ստեղծում,
- օտար լեզուների ուսուցման մեթոդների ծրագրերի, մատուցման եղանակների արդիականացում և թարմացում
- հանրակրթական նոր չափորոշիչների ներդրմանն համընթաց նախապատչաստական աշխատանքներ,
- վերապատրաստումներ, ուսումնասիրություններ և փորձի փոխանակում պետական չափորոշիչներին համապատասխան կրթական բոլոր աստիճաններում կրթական ծրագրերի և կատարողականների, արդյունքների և ազգային հենքի վրա մտածող, քննադատական մտածողությամբ օժտված, ինքնուրույն, զուգահեռներ ացկացնող և իրատես քաղաքացու դաստիարակությանն ուղղված սեմինարներին քննարկումների կազմակերպում:

Ապահովել դպրոցում համակարգիչների, պրոեկտորների, էլեկտրոնային գրատախտակի, ինտերնետային ցանցի, անխափան աշխատանք:

- ՏՀՏ կիռարմամբ կազմակերպել բազմաբնույթ միջոցառումներ, նախագծեր, մրցույթներ:
- Բարձրացնել ինֆորմատիկայի դասերին սովորողների գիտելիքները և հետաքրքրությունը ՏՀՏ գործիքների և դրանցից

ճիշտ օգտվելու կարողություններն ու հմտությունները:

- Տարաբնույթ վերապատրաստումների միջոցով նպաստել մանկավարժական համակազմի ՏՀՏ գիտելիքների

բարձրացմանը և դասապրոցեսում կիրառմանը:

4.ԴՊՐՈՑԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՆՈՆԱԿԱՐԳՈՂ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐ

Կառավարման և խորհրդակցական մարմիններ

4.1 Դպրոցի գործունեությունը կանոնակարգող իրավական ակտերը (դպրոցի կանոնադրություն, տեղայնացված օրինակելի իրավական ակտեր, ներքին իրավական ակտեր), դրանց վարումը (նորմատիվ փաստաթղթեր)

Ուսումնական հաստատությունը պետք է ունենա նորմատիվ և իրավական համակարգի զարգացման հնարավորություն, իր գործունեության համար անհրաժեշտ իրավական փաստաթղթերի ցանկը և ցանկում նշված բոլոր փաստաթղթերը: Ցանկում նշված փաստաթղթերի օրինակելի տարբերակների հիման վրա պետք է կազմված և սահմանված կարգով հաստատված լինեն իր կառուցվածքին հատուկ փաստաթղթերը:

Ուսումնական հաստատությունում պետք է առկա լինեն պարտադիր գործածության երաշխավորված փաստաթղթերը, և դրանք պետք է վարվեն կարգերի պահանջներին համապատասխան: Ուսումնական հաստատությունը պետք է արդյունավետ օգտագործի գոյություն ունեցող նորմատիվ փաստաթղթերը, դրանց օրինակելի ձևերը, իր իրավասության սահմաններում մշակի հաստատության համար անհրաժեշտ նոր նորմատիվ փաստաթղթեր (ներքին իրավական ակտեր) և դրանք կիրառի աշխատանքի ընթացքում: Այս աշխատանքին մասնակցելու հնարավորություն պետք է ունենան հաստատության բոլոր աշխատակիցները: Այդ փաստաթղթերը պետք է լինեն արդյունավետ, ժամանակակից, իրականանալի (իրականացնելի), ապահովեն աշակերտների գիտելիքների, կարողությունների և հմտությունների աճ:

ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից հաստատված է Հայաստանի Հանրապետության հանրակրթական ուսումնական հաստատություններում գործածության ենթակա փաստաթղթերի անվանացանկը: Այդ փաստաթղթերը լրացնելը դպրոցի առօրյա գործունեության կանոնակարգման համար դեռևս բավարար չէ: Պետք է ունենալ նաև խորհրադակցական մարմնի կանոնադրությունը, որտեղ նկարագրվում են նաև փաստաթղթի վարման գործընթացը և պատասխանատուների աշխատանքը: Օրինակ՝ մանկավարժական խորհրդի արձանագրությունների մատյանը վարելու համար դպրոցը մանկավարժական խորհրդի օրինակելի կանոնադրության հիման վրա պետք է մշակի իր կանոնադրությունը և դրա մեջ սահմանված կարգով վարի մանկավարժական խորհրդի արձանագրությունների մատյանը: Եթե դպրոցը համարում է, որ մանկավարժական խորհրդի օրինակելի կանոնադրությունը շատ

լավն է, և ոչ մի լրացման կարիք չկա, դպրոցը, միևնույն է, պետք է այն փոփոխի. տեղադրի իր դպրոցի անվանումը, հեռացնի «օրինակելի» բառը, սահմանված կարգով հաստատի այն:

Այսպիսով՝ դպրոցի տնօրենը պետք է վստահ լինի, որ ցանկում թվարկված փաստաթղթերի լրացման կարգերը առկա են, և փաստաթղթերը լրացվում են այդ կարգերի հիման վրա: Ամենօրյա գործունեությունը կանոնակարգելու նպատակով դպրոցն իր իրավասության սահմաններում կարող է մշակել, օգտագործել կանոնակարգող այլ փաստաթղթեր:

Ուստի ***նպատակ*** ենք սահմանում ապահովել ԿԳՄՍ-ի կողմից հաստատված պարտադիր գործածության օրինակելի փաստաթղթերի համապատասխանությունը դպրոցի կառուցվածքային առանձնահատկություններին:

Ստեղծել առավել բարենպաստ շենքային պայմաններ սովորողների և աշխատակիցների համար

Բարեկարգ և նոր գրականությամբ հարուստ գրադարան ստեղծելով շահագրգռել սովորողների մոտ սերն ընթերցանության հանդեպ:

Կանաչապատ տարածքի ստեղծման, մշակման, բարեկարգման միջոցով աշակերտների մոտ բարձրացնել հոգատարությունն ու սերը բնության և աշխատանքի, պատասխանատվությունը ստեղծածը պահպանելու հանդեպ:

4.2 Կառավարման և խորհրդակցական մարմինները

«Հայաստանի Հանրապետության պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպության օրինակելի կանոնադրության 29-րդ կետի համաձայն՝ հաստատության կառավարումն իրականացնում է հիմնադիրը, նրա լիազորած պետական մարմինը, գործադիր մարմինը՝ տնօրենը, որը պաշտոնի է նշանակվում և պաշտոնից ազատվում օրենքով սահմանված կարգով: Հաստատությունում, ըստ ՀՀ կառավարության 2002 թ. Ապրիլի 23-ի N444 որոշման, իրականացվում է կոլեգիալ կառավարում: Կոլեգիալ կառավարումն իրականացնող մարմինը հաստատության խորհուրդն է: Անհրաժեշտ է ընդլայնել դպրոցի խորհրդի լիազորությունները և իրավունքները՝ հետևյալ ուղղություններով.

- նյութատեխնիկական բազայի հարստացման ուղղությամբ որոշումների ընդունում,
- դպրոցի ծնողական խորհրդի գործունեության վերաբերյալ առաջարկությունների ներկայացում,
- կրթության պետական կառավարման մարմնին դպրոցի զարգացման վերաբերյալ առաջարկությունների ներկայացում,
- դպրոցական շինարարության վերաբերյալ պետական լիազորված մարմիններին առաջարկությունների ներկայացում:

«ՀՀ պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» ՊՈԱԿ-ի օրինակելի կանոնադրության 77-րդ կետով ամրագրված է. «Հանրակրթական դպրոցում կրթական գործունեության արդյունավետ կազմակերպման, ինչպես նաև զարգացման ծրագրերին աջակցելու և համայնքի հետ արդյունավետ համագործակցություն ապահովելու նպատակով ձևավորվում են **խորհրդակցական մարմիններ՝** ***մանկավարժական խորհուրդ, առարկայական մեթոդական միավորումներ, ծնողական, աշակերտական, հոգաբարձուների խորհուրդներ***: Հանրակրթական դպրոցում կարող են ձևավորվել խորհրդակցական կամ խորհրդատվական այլ մարմիններ»:

Խորհրդակցական բոլոր մարմիններն ունեն իրենց կանոնադրությունը, որը կազմում է դպրոցը՝ հիմք ընդունելով օրինակելի կանոնադրությունը: Կանոնադրությամբ սահմանվում են տվյալ մարմնի գործունեության ոլորտները և կարգը:

Շատ կարևոր է, որ խորհուրդներն ունենան իրական ինքնավարություն, ազատ լինեն իրենց գործողություններում՝ պահպանելով իրենց իրավունքներն ու պարտականությունները: Այն դեպքում, երբ խորհրդակցական մարմինները գործում են ձևական, չեն կատարում կամ մասամբ են կատարում իրենց պարտականությունները, դպրոցում ուսումնադաստիարակչական, կառավարման և ղեկավարման գործընթացներն էականորեն տուժում են: Դպրոցը դառնում է փակ, դպրոցում իրականացվող գործընթացները ուսուցիչների, աշակերտների և համայնքի համար դառնում են անհասկանալի, և արդյունքում նրանց և դպրոցի միջև առաջանում է անվստահության մթնոլորտ:

Որպես դպրոցի տնօրեն՝ ***պետք է կարողանալ*** գնահատել և ժամանակին միջոցներ ձեռնարկել խորհրդակցական մարմինների աշխատանքի արդյունավետությունը բարձրացնելու, ձևական գործընթացները դադարեցնելու համար: Այդ նպատակով անհրաժեշտ է.

1. Մանկավարժական խորհրդի անդամների համար կազմակերպել սեմինարներ՝ նրանց դպրոցի հիմնարար փաստաթղթերին ծանոթացնելու համար:
2. Առարկայական մեթոդական միավորումների նախագահների համար կազմակերպել սեմինարներ «Առարկայական մեթոդական միավորման աշխատանքների պլանավորումը և կազմակերպումը» թեմայով:
3. Զարգացնել առարկայական մեթոդական միավորումների մեթոդական աշխատանքի կազմակերպման զինանոցը՝ գործող փորձի ուսումնասիրության միջոցով:

4.3 Բյուջետային հնարավորություններ

Դպրոցավարության մյուս կարևոր ուղղությունը նրա բյուջետային հնարավորություններն են: Քանի որ դպրոցը հիմական և հաճախ միակ ֆինանսավորումը ստանում է պետական բյուջեից, ապա հաջողությունների և դժվարությունների հիմական պատճառը այդ միջոցների բավարար և անբավարար լինելն է: Դպրոցներն այսօր ֆինանսավորվում են աշակերտների թվով, և դպրոցի բյուջետային միջոցները բավարարում են, եթե աշակերտների թիվը դասարանում բարձր է միջինից: Եթե այդ միջոցներն անբավարար են, ապա դպրոցը բյուջետային միջոցների հետ կապված իր խնդիրները փորձում է լուծել՝ որոշ ուղղություններում քիչ ներդրումներ կատարելով: Թեև գրավոր տեղեկություն չեմ ստացել դպրոցի ֆինանսական խնդրի վերաբերյալ, սակայն բանավոր տեղեկացել եմ, որ դպրոցն ունի ֆինանսական խնդիր և աշխատում է մոտ 800000-900000 դր. մինուսով:

1. Աշխատավարձ և դրան հավասարեցված վճարումներ
2. Եկամտահարկի վճարներ

Այս ուղղություններով բյուջետային հատկացումները միջոցների սղության դեպքում, որպես կանոն, չեն փոփոխվում:

3. Գրասենյակային և տնտեսական ծախսեր
4. Գույքի և սարքավորումների ձեռքբերման ծախսեր

Այս ուղղություններով բյուջետային հատկացումները միջոցների սղության դեպքում սովորաբար նվազեցվում են:

5. Կապի ծառայությունների ծախսեր
6. Էլեկտրաէներգիայի, վառելիքի և ջեռուցման ծախսեր
7. Ջրմուղ-կոյուղու ծառայությունների գծով ծախսեր
8. Կոմունալ ծառայությունների վճարներ

Այս ուղղություններով բյուջետային հատկացումները միջոցների սղության դեպքում սովորաբար նվազեցվում են խնայողությունների հաշվին:

Ուլորտի խնդիրները կարգավորելու նպատակով ***անհրաժեշտ է*** քայլեր ձեռնարկել դպրոցի բյուջետային հատկացումներն ավելացնելու և այլ միջոցներ հայթայթելու ուղղությամբ, զարգացնելու տնօրենի և հաշվապահի կարողությունները՝ դպրոցի բյուջեում ֆինանսական մուտքերը և դրանց փոփոխությունները կանխատեսելու, նախահաշիվ կազմելու, ֆինանսական միջոցները նախահաշվին համապատասխան ծախսելու, հաշվետվություններ կազմելու համար: Կարևորում ենք դպրոցի ներգրավումը միջազգային կազմակերպությունների, այդ թվում՝ ՄԱԿ-ի ծրագրերին և այդ ուղղությամբ կատարվող աշխատանքները, շրջանավարտների խորհրդի և այլ հովանավորների աջակցությունն ստանալը:

4.4 Աշակերտական համակազմը

Աշակերտական խորհուրդը ժողովրդավարության և ինքնավարության սկզբունքներին համապատասխան դպրոցի գործունեության կազմակերպմանը

նպաստող, անմիջականորեն իրենց վերաբերող հարցերի մասին սովորողների կարծիքի ազատ արտահայտումն ապահովող և սովորողների իրավունքների ու պարտականությունների վերաբերյալ դպրոցի կանոնադրության դրույթների պահպանումը վերահսկող օղակ է:

Մենք պետք է աջակցենք նրանց, ոչ թե թելադրենք մեր որոշումները:

Դպրոցին և հատկապես սովորողներին վերաբերող որոշումները պետք է ընդունվեն բացառապես սովորողների ազատ կամքի արտահայտումը հաշվի առնելով, նրանց հետ խորհրդակցելով:

Որոշումների կայացման գործընթացում պետք է ակտիվորեն ներգրավենք աշակերտներին: Դա կնպաստի մեր առաքելությանը և նրանց մասնակցության և պատասխանատվության զարգացմանը:

Սովորողների մեջ արմատավորենք «Հանրակրթությանմասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածով սահմանված սովորողի իրավունքներն ու պարտականությունները, ծանոթացնենք դպրոցի ներքին կարգապահական կանոններին.

- Ստեղծենք միասնականթիմ՝ «Դասարան-դպրոց-համայնք-պետություն» գաղափարով.
- Սովորողների ուսման նկատմամբ ձգտումն ավելացնելու և նրանց ոգևորելու նպատակով կիրառելու եմ խրախուսելու մեթոդը (բարոյական և նյութական):
- Ծանոթանանք երեխաների խնդիրներինու կարիքներին, նրանց առանձնահատկություններին, հետաքրքրություններին ու նախասիրություններին.
- Պլանավորենք աշակերտների հետ տարվողդ աստիարակչական և արտադասարանական աշխատանքները.
- Օգնենք սովորողին ոչ միայն կրթվելու, այլև իր ընդունակություններին ու կարողություններին համապատասխան մասնագիտական կողմնորոշումը ապահովելու և իր համար մասնագիտություն ընտրելու հարցում և այլն:

Պետական դպրոցի տնօրենը պարտավոր է տվյալ տարածքում բնակվող երեխաներին (սովորողներին) ծնողի կողմից դիմում ներկայացնելու դեպքում ընդունել դպրոց՝ ապահովելով օրենսդրությամբ սահմանված նորմերին համապատասխան պայմաններ: Դպրոց ընդունելության ժամանակ սովորողի գիտելիքների ստուգում չի թույլատրվում:

Աշակերտները ոչ միայն մտավոր, այլև սոցիալական և հուզական (էմոցիոնալ) անհատականություններ են, և այս ամենն ազդում է նրանց սովորելու արդյունավետության վրա: Որպեսզի հասկանանք, թե ովքեր են մեր աշակերտները, պետք է հաշվի առնենք՝

1. նախնական գիտելիքները,
2. մտավոր զարգացումը,
3. մշակութային դաստիարակությունը,
4. զարգացվածությունը և զարգանալու հույսերը(սպասելիքները):

Դպրոցի ***նպատակներից են՝*** զարգացնել դպրոցի ուսուցիչների կարողությունները սովորողների նախնական գիտելիքները որոշելու, սովորողների տարիքային հոգեբանությունը ճանաչելու, նրանց հետ արդյունավետ աշխատելու համար, դպրոցում ներդնել հոգեբանական ծառայություն՝ սովորողներին և ուսուցիչներին անհրաժեշտ խորհրդատվություն տրամադրելու, նրանց օգնելու և դասարանում առաջացող խնդիրների լուծմանն աջակցելու համար:

4.5. Մանկավարժական համակազմը

Ուսուցիչները և աշակերտները մեկ միասնական համակարգ են, և նրանց գործունեությունը փոխկապակցված է: Մենք պետք է կարողանանք գնահատել մեր մանկավարժական պոտենցիալը, ինչի համար պետք է ունենանք գնահատման չափանիշներ: Մենք կարող ենք ուսուցչին գնահատել՝ ըստ նրա կրթության և փորձառության, ըստ նրա՝ ուսուցման գործընթացում ունեցած հաջողությունների, ըստ դպրոցի զարգացման գործընթացում նրա ունեցած ներդրման: Չափանիշներ կարող են լինել օրինակ՝

1. Ունի բարձրագույն մասնագիտական կրթություն:
2. Ունի աշխատանքի 5 և ավելի տարվա փորձ:
3. Ուսուցման գործընթացում կիրառում է դասավանդման այնպիսի մեթոդներ և հնարներ, որոնք աշակերտներին հնարավորություն են տալիս ստանալու բավարար գիտելիքներ, ձեռք բերելու անհրաժեշտ կարողություններ և հմտություններ:
4. Գիտի գնահատման մեթոդաբանությունը և կարողանում է այն կիրառել:
5. Գիտի առարկայի չափորոշիչները և դասավանդելիս առաջնորդվում է չափորոշիչներով:
6. Իր աշխատանքում պատասխանատու է և պարտաճանաչ, նպաստում է դպրոցի ուսումնական և վարչական աշխատանքների կազմակերպմանը, ուսումնասիրում է գոյություն ունեցող փորձը և տարածում է իրենը:
7. Գիտի տարիքային հոգեբանությունը:
8. Գիտի և հարգում է երեխաների իրավունքները:
9. Պահպանում է մանկավարժական էթիկայի կանոնները:
10. Ազատորեն տիրապետում է ՏՀՏ-ներին և այն արդյունավետորեն կիրառում է դասապրոցեսի ընթացքում:

Կրթության որակի բարելավումը նախ և առաջ ենթադրում է որակյալ ուսուցիչների առկայություն: Կրթության որակի բարձացման և բարեփոխումների հաջողության ապահովման առանցքային դերը պատկանում է ուսուցչին:

Դպրոցի մանկավարժական համակազմի որակական բարելավումը համարում ենք դպրոցի ***ռազմավարություններից*** մեկը: Այն ենթադրում է ՀՀ կառավարության 14.10.2010 թ. N 1391- Ն որոշմամբ հաստատված կարգի պահանջների կատարում, այսինքն՝

Ա. Ուսումնասիրել, ընդհանարացնել մանկավարժական առաջավոր փորձը և ներդնել պրակտիկ աշխատանքում:
Բ. Որակավորման տարակարգ չունեցող, սկսնակ ուսուցիչներին նախապատրաստել ատեստավորման:
Գ. Կազմակերպել մասնագիտական և մանկավարժական-մեթոդական խորհրդակցություններ, խորհրդատվություններ:
Դ. Ուսուցիչներին հաղորդակից դարձնել մանկավարժության նորագույն նվաճումներին, կազմակերպել սեմինարներ, մանկավարժական մեթոդական ընթերցումներ:
Ե. Նպաստել ուսուցիչների որակավորման բարձացմանը:
Զ. Ընդլայնել տեղեկատվական և հեռահաղորդակցման տեխնոլոգիաների ներդրման գործընթացը, ձեռք բերել ոչ միայն նոր համակարգիչներ, այլև էլեկտրոնային գրատախտակ,
Հասնել նրան, որ յուրաքանչյուր ուսուցիչ տիրապետի համակարգչային ծրագրերին և կարողանա օգտվել համացանցից: Այդ նպատակով կազմակերպել դասընթացներ:
Է. Կատարելագործել ուսուցիչների աշխատանքը կրթական կայքերի միջոցով (armedu.am, edu.am, aniedu.am, dasaran.am և այլն):

Նախատեսում ենք աջակցել մանկավարժներին մշակել և տպագրել իրենց մեթոդական աշխատանքների արդյունքների վերաբերյալ նյութերը և ստեղծել համապատասխան պայմաններ փորձարարական հետազոտական աշխատանքներն իրականացնելու համար:

4.6.Առարկայական մեթոդական միավորումներ

Այս օղակը դպրոցի, կարելի է ասել, ամենաառաջնային և կարևորագույն օղակն է, որը ի թիվս այլ հարցերի.

- Քննարկում է հանրակրթական առարկայական չափորոշիչներին համապատասխան ուսումնական ծրագրերի, ուսումնական պլանների նախագծերը.
- Առաջարկություն է ներկայացնում տնօրենին՝ուսումնական պլանի դպրոցական բաղադրիչի ժամերի տնօրինման մասին.
- Կատարում է ուսումնական պլանով սահմանված դասաժամերի նախնական բաշխում և առաջարկություն է ներկայացնում տնօրենին.
- Ուսուցիչներին հաղորդակից է դարձնում մանկավարժության նորագույն նվաճումներին, նպաստում է ուսուցիչների որակավորման բարձրացմանը.
- Կազմակերպում է առարկայական օլիմպիադաներ, մրցույթներ, միջոցառումներ և այլն:

Վերոնշյալից ակնհայտ է, որ դպրոցի բովանդակային մասն ապահովողը հենց այս օղակն է, որի կատարած աշխատանքների կամ նրա բազիսի վրա կառուցվելու է

դպրոցի առաջընթացի բուրգը՝ «Դպրոց՝բոլորի համար»մեր երազանքների շենքը:

Դպրոցական կոլեկտիվը (հատկապես ուսուցչական) պետք է դիտարկվի որպես փոփոխությունների իրականացման կարևոր միավոր, իսկ երբ բոլորի կողմից հարգված ուսուցիչները մասնակից դառնան փոփոխությունների իրականացման աշխատանքներին, մյուսները վստահությամբ կլցվեն փոփոխությունների հանդեպ՝ առաջարկելով բարեփոխումների նոր գաղափարներ:
Ուսուցիչների աշխատանքի արդյունավետությունը բարձրացնելու և նրանց ոգևորելու նպատակով կիրառելու եմ ուսուցչին խրախուսելու մեթոդը (բարոյական և նյութական):
Ամեն գործընթաց վերահսկողության տակ պահելով՝ ներմուծելու եմ բոլորի կողմից ընդունելի արժեքներ ու նոր գաղափարներ, իսկ առօրյա աշխատանքում՝ կպահպանենք միայն այն հին ավանդույթը, ինչը կնպաստի նորի կայացմանն ու զարգացմանը:

4.7.Ծնողական խորհուրդ

Դպրոցի դասարանների ծնողական խորհուրդները՝ նախագահ և երկուսից չորս անդամի կազմով, ընտրվում են դասարանի ծնողների ընդհանուր ժողովի կողմից մեկ ուսումնական տարվա համար, իսկ դպրոցի ծնողական խորհուրդը կազմավորվում է դասարանների ծնողական խորհուրդների նախագահներց:
Դպրոցի սովորողի ծնողի իրավունքներն ու պարտականությունները սահմանված են «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածում:
Հանրակրթության քաղաքականության իրականացման և կրթության որակի արդյունավետության բարձրացման ուղղությամբ դպրոցի կողմից կազմակերպվող աշխատանքը միշտ թերի կլինի, եթե ծնողը դպրոցի և կրթության նկատմամբ, մասնավորապես, անտարբեր գտնվի: «Հանրակրթությանմասին» ՀՀօրենքի 28-րդ հոդվածի 2-րդ մասով ծնողը պարտավոր է.
Երեխայի համար ընտանիքում ապահովել համապատասխան պայմաններ՝ կրթություն ստանալու համար.
Մշտապես հոգալ երեխայի ֆիզիկական առողջության և հոգեկան վիճակի մասին, ստեղծել համապատասխան պայմաններ երեխայի հակումների և ընդունակությունների զարգացման, կրթական կարիքների բավարարման համար.

Հարգել երեխայի արժանապատվությունը, դաստիարակել աշխատասիրություն, բարություն, ընկերասիրություն, հանդուրժողականություն, գթասրտություն, հարգալից վերաբերմունք ընտանիքի, մեծահասակների, պետական և մայրենի լեզվի, ժողովրդական ավանդույթների և սովորույթների նկատմամբ.
Դաստիարակել հարգանք ազգային, պատմական, մշակութային արժեքների և հայրենիքի նկատմամբ, հոգատար վերաբերմունք պատմամշակութային հարստության և շրջակա միջավայրի նկատմամբ, հանդուրժողական վերաբերմունք այլ ժողովուրդների և մշակույթների նկատմամբ.

Դաստիարակել հարգանք ուսումնական հաստատության և մանկավարժական աշխատողների նկատմամբ.
Սովորողին զերծ պահել ծխախոտ, ոգելից խմիչքներ, հոգեմետ նյութեր, զենք, զինամթերք, թունավոր, պայթուցիկ, ինչպես նաև օրենքով և ուսումնական հաստատության կանոնադրությամբ արգելված այլ նյութեր օգտագործելուց:
Միշտ չէ, որ վերը նշված պարտավորությունները ծնողի կողմից պահպանվում են կամ իրագործվում: Հասարակության սոցիալական վիճակից ելնելով՝ շատ ծնողներ չեն կարողանում իրագործել իրենց պարտավորությունը (թեև մեծ է ցանկությունը), իսկ կան ծնողներ, որոնք ունեն հնավորություն, սակայն չեն հետևում իրենց պարտավորություններին (չնայած ամեն մի շռայլություն կարող են թույլ տալ իրենց երեխայի բարեկեցությունն ապահովելու համար):
Խնդիրն այն է, որ տարբեր ծնողներ տարբեր կերպ են տեսնում դպրոցում ուսումնական գործընթացին աջակցելու և դաստիարակչական գործընթացում իրենց դերը: Ունենալով նաև ինտելեկտուալ տարբեր մակարդակ՝ ծնողները տարբեր դաստիարակություն են տալիս իրենց երեխաներին, այդ պատճառով էլ ընտանիքի հետ համագործակցությունը մենք պետք է հիմնենք տարբերակված մոտեցման վրա:
Նշված խնդիրներին լուծում տալու և ցանկալի արդյունքին հասնելու համար դպրոցը պետք է՝

- Ամրապնդի և խորացնի սովորողի ծնողի և նրա ընտանիքի հետ դպրոցի համագործակցությունը, որը ենթադրում է ընտանիքի, երեխայի ընտանեկան պայմանների և դաստիարակության առանձնահատկությունների համակողմանի և հետևողական ուսումնասիրություն:

- Ծնողների և մանկավարժների համագործակցությամբ մշակի երեխայի հանդեպ միասնական պահանջները և հստակեցնի դաստիարակչական խնդիրները:
- Երեխաների գիտելիքների, ձեռքբերումների, հակումների և դժվարությունների մասին պարբերաբար իրազեկի ծնողներին՝ժողովների, տնայցերի և առանձին հանդիպումների միջոցով:
- Կազմակերպի աշակերտների առանձնահատկությունների, նախասիրությունների, հետաքրքրությունների, առողջապրելակերպի վերաբերյալ զրույց-զեկուցումներ՝ թեմաների ընտրությունը քննարկելով դասղեկի ժամերին՝ծնողների և աշակերտների մասնակցությամբ:
- Աջակցի ծնողական խորհրդին (այդ թվում՝դասարանական) իրենց աշխատանքի և այլ միջոցառումների (էքսկուրսիա, տոնակատարություն, դասարանական ժողով, կոնֆերանս և այլն) կազմակերպման հարցերում:
- Ուսումնական տարվա սկզբին ծնողների և երեխաների համատեղ գործունեության պլանավորմամբ հստակեցնի համագործակցության բովանդակությունն ու եղանակները, աջակցի տարեկան աշխատանքային պլանի

կազմմանը՝դպրոցի ուսումնադաստիարակչական պլանին և սույն զարգացման ծրագրին համապատասխան:

4.7.Ուսումական միջավայրը

Ուսումական միջավայրի ճիշտ վերլուծությունը զարգացման ծրագրի կարևոր գործոններից է: Ուսումական միջավայրը դասասենյակների և առարկայական կաբինետների, դասագրքերի և այլ գրականության, սարքավորումների և մուլտիմեդիայի, դպրոցում ձևավորված սովորեցնելու և սովորելու ավանդույթի, դպրոցի ներսում և դպրոցից դուրս առկա հասարակական հարաբերությունների ամբողջությունն է: Այն պայմանավորված է նշված բոլոր ուղղությունների առկայությամբ և փոխկապակցվածությամբ: Դպրոցը կարող է ուժեղ լինել մի ուղղությամբ, բայց այդ ուժը կթուլանա մեկ այլ ուղղության թույլ լինելու պատճառով:

Դպրոցը պետք է ձգտի, որ՝

1. դասասենյակները և առարկայական կաբինետները վերանորոգված և կահավորված լինեն նոր գույքով,
2. ապահովված լինի դասագրքերով և ուսումական այլ գրականությամբ, սարքավորումներով և մուլտիմեդիայով,
3. դպրոցում ձևավորված լինեն հասարակական այնպիսի հարաբերություններ,որոնք համապատասխանում են երեխաների իրավունքներին և ժողովրդավարական դպրոցի գաղափարներին,
4. դպրոցում ձևավորված լինի սովորեցնելու և սովորելու ավանդույթ (մշակույթ):

Ծնողների և երեխաների սոցիալական պատկերը պետք է նկարագրվի դպրոցի ուսումական ծրագրում, արտացոլվի ուսումական պլանում և իրականացվի ուսումնառության ընթացքում: Այս պահանջը դրված է նաև ուսումական պլանի դպրոցական բաղադրիչի բաշխման հիմքում: Դրա արդյունքում աշակերտները կունենան ուսումական հաջողություններ, որոնք տոկոսային հարաբերությամբ ներկայացվում է դպրոցի ներքին գնահատման ժամանակ:

Դպրոցի ուսումական պլանը դպրոցի հիմնարար փաստաթղթերից է, որը ապահովում է դպրոցի կողմից պետական և հանրային պատվերի կատարումը: Դպրոցի ուսումական պլանը պետք է կազմվի՝ ըստ սովորողների և ոչ թե ուսուցիչների կարիքների:

Այս առումով կարևորում ենք ուսումական պլանի համապատասխանեցումը դպրոցում սովորողների կարիքներին:

Դաստիարակությունը պետության կրթական քաղաքականության և կրթության համակարգի ռազմավարական կարևորագույն խնդիրն է, քանզի կրթության գերնպատակն անձի անհատականության կայացումն է:

Դպրոցը պետք է քայլեր ձեռնարկի սովորողների դաստիարակության համակարգի կատարելագործման ուղղությամբ՝

1. ծնողների ուսուցում կազմակերպելով,
2. առարկայական դասընթացներում հզորացնելով դաստիարակության մասը,
3. արտադասարանական միջոցառումներին դաստիարակչական ուղղվածություններ տալով,
4. ուսման նկատմամբ դրական վերաբերմունք ձևավորելով,
5. ծնող-դպրոց կապը հզորացնելով:

Վերոբերյալի հիմամբ՝ ***նպատակ ունենք*** բարելավելու դպրոցում իրականացվող դաստիարակչական աշխատանքները՝ մշակելով և ներդնելով արդյունավետ մեխանիզմներ, դպրոցում զարգացնելով ներառական կրթությունը, ներմուծելով կրթական արդի ծրագրեր, այդ թվում՝ այլընտրանքային և միջազգային:

4.8. Դպրոցի համագործակցությունը առանձին կառույցների և նրանց ներկայացուցիչների հետ

Դպրոցի նյութատեխնիկական բազայի բարելավման և սովորողներին ու մանկավարժներին հասարակական կյանքին ակտիվորեն ներգրավելու համար անհրաժեշտ է մշտապես համագործակցել առանձին կառույցների և նրանց ներկայացուցիչների հետ: Ստորև ներկայացված Գծապատկեր 2-ը արտահայտում է այդ համագործակցության տեսլականը:

4.9. Կրթության որակը

Կրթության որակը կարելի է բարձրացնել՝ բացահայտելով իրավիճակը գնահատելու միջոցով այն փոխելու հնարավորությունները: Անհրաժեշտ է դիտարկել հետևյալ գործոնները.

1. Ուսումնական գործընթացի փաստացի վիճակը:
2. Կրթական գործընթացի կատարողականը:
3. Կրթական գործընթացի արդյունավետությունը:
4. Կրթական գործընթացի որակը կրթական աստիճաններում:
5. Դասերի, ուսումնական միջոցառումների որակը:

Մեր առջև ***խնդիր ենք դնում*** բարձրացնելու աշխատանքային կարգապահությունը և ուսուցման որակը:

4.10.Նորարարություն և տեխնոլոգիաներ

Մանկավարժական գիտության, կրթական նոր տեխնոլոգիաների զարգացումն էլ ավելի է խթանում դասավանդման նոր մեթոդների, ուսուցման նոր ձևերի մշակումը: Այսօր արդեն նորություն չեն դասավանդման փոխներգործուն, աշակերտակենտրոն մեթոդները, ուսուցման կազմակերպման տարբեր եղանակները, հեռավար ուսուցման ձևերը:

Դպրոցում այսպիսի փոփոխություններ կատարելը պահանջում է ժամանակ և միջոցների ներդրում: Հնարավոր չէ մեկ սեմինարի կամ վերապատրաստման դասընթացի միջոցով բոլոր ուսուցիչների մոտ ձևավորել ուսուցման ժամանակակից մեթոդների, ՏՀՏ-ների արդյունավետ կիրառման կարողություններ: Ուսուցիչը պետք է ժամանակ ունենա նոր գիտելիքներ ստանալու, դրանք գործածելու, սխալները ուղղելու և մոտեցումները վերանայելու համար: Դպրոցի վարչական կազմն էլ պետք է կարողանա ուսուցչի աշխատանքը վերահսկել, անհրաժեշտ օժանդակություն ցույց տալ և ապահովել նոր ստացած գիտելիքների և հմտությունների կիրառումը:

Մյուս կողմից՝ ցանկալի է, որ դպրոցն ըստ իր զարգացման առաջնահերթությունների ներդնի գիտականորեն հիմնավորված որևէ նոր, զարգացում ապահովող գիտամանկավարժական նորարարություն: Այն հնարավորություն կտա դպրոցի աշխատակիցներին, աշակերտներին և ծնողներին, ինչպես նաև հիմնադրին գնահատելու դպրոցի ջանքերը գիտական տեսանկյունից՝ դրանով դպրոցը առանձնացնելով մյուս դպրոցներից, օգտագործելով, տարածելով հաջողված փորձի արդյունքները:

Այս հիմնախնդիրները ***լուծելու նպատակով*** հարկ ենք համարում ՏՀՏ-ների կիրառման միջոցով բարձրացնել ուսուցման արդյունավետությունը, ուսուցման կազմակերպման կոլեկտիվ եղանակի միջոցով ապահովել սովորողների անհատական առաջընթացը:

Հարստացնել դպրոցի գրադարանային ֆոնդը. Ձեռք բերել ուսումնական, գեղարվեստական գրականություն, առարկայական ծրագրեր և մեթոդական ձեռնարկներ: Դպրոցում ստեղծել վիրտուալ գրադարան, այն հարստացնելով ուսումնական խտասկավառակներով (CD), վիրտուալ լաբորատորիաներով: Համացանցում ստեղծել դպրոցի WEB էջը:

5. ԴՊՐՈՑԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆԱԽԸՆՏՐԵԼԻ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Դպրոցում հարկավոր է հաստատել հանրակրթության կազմակերպման հետևյալ սկզբունքները.

- Հանրակրթությունը պետք է իրականացվի ազգայինի հենքի վրա՝ համամարդկային արժեքների ներդաշնակ զուգորդմամբ:
- Հանրակրթությունը պետք է նպաստի մարդու և քաղաքացու շահերին, ծառայի անհատին ու ժողովրդին:
- Հանրակրթությունը իրականացվում է ՀՀ պաշտոնական լեզվով՝ գրական հայերենով: Այն նպատակաուղղված է հայոց լեզվի, հայ ժողովրդի մշակութային ժառանգության պահպանմանն ու զարգացմանը, ազգային ինքնության ու միասնության պահպանմանը:
- Հանրակրթությունն իրականացվում է ուսուցման և դաստիարակության միասնականության սկզբունքով՝ պահպանելով իր աշխարհիկ բնույթը, զերծ մնալով խտրականությունից ու սահմանափակումներից: Այն հավասարապես մատչելի է յուրաքանչյուրին՝ անկախ ազգությունից, ռասայից, սեռից, լեզվից, դավանանքից, քաղաքական կամ այլ հայացքներից, սոցիալական ծագումից, գույքային կամ այլ դրությունից:
- Հիմնական կրթությունը պարտադիր և հասանելի է յուրաքանչյուր անձի՝ անկախ նրա հետաքրքրություններից, մասնագիտական նախնական կողմնորոշումից, մտավոր և ֆիզիկական կարողություններից:
- Հանրակրթությունն իրականացվում է՝ սովորողների տարիքային առանձնահատկություններին և զարգացման մակարդակին համապատասխան:

6. ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ և ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ

Կրթության բովանդակային բաղադրիչներն են.

- գիտելիքների համակարգ,
- կարողություններ և հմտություններ,
- արժեքային համակարգ:

Այսօր, երբ կրթական բարեփոխումների հիմնական պահանջներից մեկը դարձել է աշակերտակենտրոն ուսուցումը, անցում է կատարվել գիտելիքակենտրոն համակարգից ուսուցման եռակենտրոն համակարգի՝ գիտելիքներ, կարողություններ և հմտություններ, արժեքային համակարգ, և խնդիր է դրվել սովորեցնելու սովորել, առաջնային պլան են մղվում այդ խնդիրների լուծմանն ուղղված մեթոդներն ու մեթոդական հնարները: Այդ նպատակով անհրաժեշտ է սովորողին ծանոթացնել ճանաչողության մեթոդներին և ձևավորել դրանք գործնականում կիրառելու կարողություններ և հմտություններ:

Սովորողը պետք է գիտակցի սեփական մշակույթի, լեզվի, պատմության, արվեստի, ավանդույթների, ազգային և այլ արժեքների կարևորությունն ու նշանակությունը և լինի դրանց կրողը:

7. ԴՊՐՈՑԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՈՒՄԸ

Մեր կարծիքով դպրոցում դաստիարակչական համակարգի կատարելագործման նպատակով անհրաժեշտ է՝

- դաստիարակչական գործընթացներում առաջնորդվել միասնական սկզբունքներով և կանոններով, միասնական մանկավարժական պահանջներով,
- ծնողներին ակտիվորեն ընդգրկել դպրոցի դաստիարակչական գործընթացներում,
- հետևել, որ դաստիարակչական աշխատանքները հիմնվեն հստակ նախագծված դասղեկական պլանների վրա,
- վերլուծել դպրոցի դաստիարակչական միջավայրը և բացահայտելով առկա խնդիրները և բացթողումները՝ ձեռնարկել անհրաժեշտ միջոցառումներ,
- քայլեր ձեռնարկել աշակերտների, ինչպես նաև աշակերտների և ուսուցիչների միջև բավարար համագործակցություն, հաղորդակցության համար դրական միջավայր ստեղծելու ուղղությամբ,
- դասղեկական ժամերի և արտադասարանական միջոցառումների միջոցով իրականացնել բարոյական և հայրենասիրական դաստիարակության ծրագրեր,
- ընդլայնել ինչպես դասարանների, այնպես էլ առանձին աշակերտների ներդպրոցական և արտադպրոցական դաստիարակչական բնույթի միջոցառումներին մասնակցելու հնարավորությունները,
- դպրոցում ստեղծել «Ծնողական համալսարան» և դրանում ընդգրկել դասղեկների, հոգեբանների, մանկավարժական գիտության տարբեր մասնագետների: Անհրաժեշտ է նաև պարբերաբար վերլուծել այդ համալսարանում հավաքագրված դաստիարակչական բնույթի խնդիրները, որոնք առնչվում են ծնողների կողմից այս ուղղությամբ բավարար գիտելիքներ, կարողություններ և հմտություններ տրամադրելուն և նպատակ ունեն օգնելու վերջիններիս,
- համագործակցել իրավապահ մարմինների հետ:

8. ՀԱՅՐԵՆԱՍԻՐԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

Սովորողների հայրենասիրական դաստիարակությունը մշտապես եղել է ժամանակակից դպրոցի ուշադրության կենտրոնում, քանի որ մանկությունն ու պատանեկությունը ամենանպաստավոր շրջանն են անձի մոտ հայրենիքի նկատմամբ պատկերացումները ճիշտ ձևավորելու, սեր արմատավորելու համար:

Հայրենասիրական դաստիարակության բնագավառում ուղենշային նպատակներին հասնելու համար մեր կարծիքով անհրաժեշտ է՝

- դպրոցի վարչական և ուսուցչական անձնակազմին ակտիվորեն ընդգրկել սովորողների հայրենասիրական դաստիարակության ծավալման և կատարելագործման գործընթացներում,
- պարբերաբար համակարգել, վերլուծել և գնահատել ծրագրավորված հայրենասիրական միջոցառումների կատարման արդյունավետությունը,
- դպրոցական հիմնական բոլոր միջոցառումներն իրականացնելիս ապահովել հայկական խորհրդանիշների և հայրենասիրական գաղափարների գործածումը,
- ամփոփել և տարածել հայրենասիրական դաստիարակության ասպարեզում լավագույն մասնագետների մանկավարժական առաջավոր փորձը,
- հայրենասիրական դաստիարակության արդյունավետությունը բարձրացնելու նպատակով ներդնել աշխատանքի նոր ձևեր և մեթոդներ, ինչպիսիք են զանգվածային լրատվության միջոցները և ժամանակակից տեխնոլոգիաները՝ ֆիլմեր, սկավառակներ, էլեկտրոնային նյութեր և այլն,
- դպրոցի աշակերտական խորհրդին ընդգրկել ռազմահայրենասիրական դաստիարակությանն ուղղված միջոցառումներում,
- հաճախակի անցկացնել ռազմահայրենասիրական բնույթի մրցույթներ, հանդիպումներ, զրույցներ և այլ միջոցառումներ, ինչպիսիք են՝
- «Հայոց պատմություն», «Հայ ազգ», «Հայոց լեզու», «Հայ ընտանիք» թեմաներով հանդիպումները, զրույցները, սեմինարները և այլ միջոցառումները,
- հայտնի մարդկանց, զինվորների, հայ ազատամարտիկների, պատերազմի հաշմանդամների հետ հանդիպումները,
- հարստացնել և համալրել հայրենասիրական դաստիարակության կազմակերպման և իրականացման համար անհրաժեշտ մանկավարժական տեղեկատվական բանկը:

9. ԴՊՐՈՑԻ ՇԵՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԲԱՐԵԼԱՎՈՒՄ ԵՎ ՆՅՈՒԹԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲԱԶԱՅԻ ՀԱՐՍՏԱՑՈՒՄԸ

Դպրոցի շենքային պայմանների և նյութատեխնիկական բազայի բարելավման նպատակով անհրաժեշտ է մշտապես համագործակցել դպրոցի

կառավարման խորհրդի, խորհրդակցական և կառավարման մարմինների հետ: Համագործակցել բարեգործական և հասարակական կազմակերպությունների, շրջանավարտների խորհրդի հետ:
Դպրոցի շենքային պայմանների բարելավման համար անհրաժեշտ է
-ստեղծել մարզադահլիճ, հանդիսությունների դահլիճ, ջեռուցման համակարգ,
-ապահովել դպրոցի մարզադահլիճը և հանդիսությունների դահլիճը համապատասխան գույքով,
-կահավորել դպրոցի գրադարանը,
-դպրոցամերձ հողամասի բարեկարգում(կանաչապատում, ծառատունկ և այլն), դպրոցամերձ հողամասի ցանկապատում:

Դպրոցի նյութատեխնիկական բազայի բարելավման նպատակով անհրաժեշտ է.
-վերազինել և հարստացնել դպրոցի լաբորատորիաները,
-ձեռք բերել նոր ուսումնադիդակտիկ պարագաներ, գրքեր
-վերազինել և հարստացնել դպրոցի համակարգչային կաբինետը համակարգիչներով և էլեկտրոնային գրատախտակով
-դպրոցում մասնագիտական կողմնորոշման անկյան ստեղծում և կահավորում:

10.ԴՊՐՈՑԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՌԻՍԿԵՐԸ

1. Դպրոցի ֆինանսական սահմանափակ հնարավորություններ
2. Դպրոցի նյութատեխնիկական բազայի ոչ բավարար հագեցվածություն
3. Ծնողական համայնքի կողմից դպրոցի գործունեության մասնակցության պասիվություն
4. Դպրոցի կողմից կատարած աշխատանքների հաշվետվության մեխանիզմների անկատարություն

Ռիսկերի ազդեցության նվազեցման ուղղված գործողություններ

1. Դասարանների կոմպլեկտավորում ուսպլանով սահմանված թվաքանակով
2. Ֆինանսական մուտքերի և դրանց փոփոխման կանխատեսում
3. Եկամուտների համապատասխան ծախսերի ճիշտ պլանավորում
4. Դպրոցի գործունեության թափանցիկություն ծնողական համայնքի, հովանավորների համար

11. ԴՊՐՈՑԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ

- Դպրոցի խորհրդի կողմից տարեկան առնվազն 1 անգամ, ուստարվա աշխատանքային ծրագրում ընդգրկված ԴԶԾ-ի դրույթների կատարողականների հաշվետվությունների քննարկումներ
- Կառավարման խորհրդի մասնակցությունը տնօրինության կողմից ԴԶԾ-ի արդյունքների գնահատմանը

Յուրաքանչյուր ուսումնական տարվա համար դպրոցը կունենա զարգացման ծրագրից բխող ուսումնադաստիարակչական աշխատանքների ծրագիր/գործողություններ,կատարողներ, ժամանակացույց/: Որքան էլ ընդհանուր լինեն պահանջները, օրենքներն ու ծրագրերը, յուրաքանչյուր դպրոց ունի իր առանձնահատկությունները և դրանից բխող մարտավարությունը: Որպես հայ մարդ և մանկավարժ մեծագույն ցանկությունս է, որ դպրոցն արժանի լինի իր կոչմանը, և նրա շրջանավարտը լիարժեք տիրապետի պետական լեզվին, ճանաչի իր հայրենքիը, լինի հայրենասեր, ունենա ազգային մտածողություն, ճանաչի հայ և համաշխարհային քաղաքակրթության նվաճումները, իմանա բնապահպանման հիմնախնդիրները, լինի բնության և շրջակա միջավայրի պաշտպան:
Մեծագույն պատասխանատվությամբ գիտակցելով դպրոցի տնօրենի աշխատանքի կարևորությունը,լիազորություններն ու պարտականությունները՝ընտրվելու դեպքում կշարունակեմ դպրոցի ղեկավարում ժողովրդավարական սկզբունքներով, նպատակային քայլերով հետամուտ կլինեմ առաջադրված խնդիրների լուծմանը,հետևողական գործելակերպով կբարձրացնեմ կառավարման արդյունավետությունը՝ ապահովելով դպրոցի զարգացման ծրագրի իրականացումը:
Խորապես համոզված եմ, որ իմ հետագա գործունեությունը կնպաստի դպրոցի առաջընթացին, բարգավաճմանն ու վերելքին, ժամանակակից դպրոցաշինության և կրթության որակական գործընթացներում կունենամ իմ ներդրումը:
Դպրոցը պիտի դառնա այն միջավայրը, որտեղ աշակերտները սիրով հաճախեն, լինեն ոգևորված և ամեն օր ավելացնեն իրենց հմտությունները, կարողությունները, գիտելիքը, արժեքային համակարգը և ձևավորեն սեփական վերաբերմունքն իրերի,երևույթների նկատմամբ:
Դպրոցը պետք է շարունակաբար լինի ինքնակատարելագործման գործընթացի մեջ: Դեռ 18-րդ դարում հայկական դպրոցներից մեկի կանոնադրության մեջ ամրագրված էր հետևյալ դրույթը. <<Ուսուցիչի հայրենասիրության և առաքինության վարքը ավելի նախապատվելի է, քան նրա անկանոն տաղանդներն ու ձիրքերը>>:
Լիահույս եմ, որ նմանատիպ արժեքներ ունեցող ուսուցիչների առկայությամբ մենք կգրանցենք լավագույն հաջողությունները կրթության և դաստիարակության գործընթացում:

12. ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԸ /ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄ/

«Հանրակրթության մասին» ՀՀօրենքի 11րդ հոդվածի 1-ին կետի 9-րդ ենթակետի համաձայն դպրոցի զարգացման ծրագրի կատարման վերահսկումը դպրոցի խորհրդի օրենսդրական պարտականությունն է, իսկ զարգացման ծրագրով նախատեսված միջոցառումների իրականացումը լինելու է իմ ամենօրյա աշխատանքային պարտականությունը, որն իր մեջ ներառելու է.

- ծրագրի իրականացման ուղղությամբ կատարված աշխատանքների վերլուծություն, վերլուծության արդյունքում միջոցառումների վերանայում, այդ ուղղությամբ կառավարման և խորհրդակցական մարմինների նիստերում առաջարկությունների քննարկում.
- ուսուցիչների և սովորողների գործունեության շարունակական թեմատիկ, ընթացիկ, անհատական և կանխարգելիչ վերահսկողության իրականացում.
- ծրագրի իրականացման արդյունքների տարեկան ամփոփում և ներկայացում դպրոցի կառավարման և մանկավարժական խորհուրդներին:

13. ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Դպրոցի զարգացման ծրագրի իրականացման արդյունքում ակնկալվում է ստանալ հետևյալ արդյունքները.

- ուսուցիչների մասնագիտական և ընդհանուր մշակութաբանական ու մեթոդաբանական պատրաստվածության աճ,
- ուսուցիչների ինքնակրթության մոտիվացիայի աճ,
- ուսուցման որակի աճ,
- ուսումնառության որակի աճ,
- սովորողների շրջանում կրթության վարքի, նրանց իրազեկվածության աճ,
- դպրոցի՝ որպես նորարարությունների ակտիվ ներդրման և համայնքի կրթամշակութային կենտրոնի դերի աճ,
- դպրոցի զարգացմանն ուղղված արտաբյուջետային միջոցների աճ,
- սովորողների և ուսուցիչների անհատական ձեռքբերումների աճ,
- կրթության որակի աճ:

Ուսումնական հաստատությունում առարկայական ծրագրերի յուրացումը դասապրոցեսի ընթացքում մատչելի դարձնելու համար համակարգչային գրագիտությունը չափազանց կարևոր է և՛ ուսուցիչների և՛ սովորողների համար: